«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N2

25.07.2025թ. գ. Ոսկեվան

«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԸՆՏՐԵԼՈՒ
ԵՎ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրության 23-րդ կետի 5-րդ և 8-րդ ենթակետերով ու 26-րդ կետով, «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության ընդհանուր ժողովը միաձայն որոշեց՝

1. Ընտրել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության խորհուրդ և սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության խորհրդի անհատական կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սահմանել «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության խորհրդի իրավասությունները ու գործունեության կանոնակարգը՝ համաձայն հավելված 2-ի:

3. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության նախագահ Բ. Սաֆարյանին՝ ապահովել սույն որոշման տեղադրումը կայքում ու այլ միջոցներով հանրայնացումը:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ Բ. Սաֆարյան

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ Ֆ. Բաբայան

25.07.2025թ.

Հավելված 1

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N2 որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) խորհրդի անհատական կազմն է՝

1) Ոսկեվան գյուղի բնակիչ հանդիսացող Կազմակերպության անդամներից՝

ա. Սերյոժա Լևոնի Ալեքսանյան,

բ. Արարատ Գեղամի Ղազինյան,

գ. Արթուր Անուշավանի Մելքոնյան,

դ. Աշոտ Սուրենի Սաֆարյան.

2) Հայաստանի Հանրապետության այլ բնակավայրերում բնակվող Կազմակերպության անդամ Ոսկեվանցի հայրենակիցների ներկայացուցիչներից՝

ա. Ալբերտ Եփրեմի Սահակյան (ք. Երևան),

բ. Սերյոժա Սամադի Եզանյան (ք. Երևան),

գ. Շավարշ Անաստասի Ղազինյան (ք. Վանաձոր),

դ. Անաստաս Համայակի Գրիգորյան (ք. Իջևան).

3) օտարերկրյա պետություններում բնակվող Կազմակերպության անդամ Ոսկեվանցի հայրենակիցների ներկայացուցիչներից

ա. Արամ Ավետիքի Բարսեղյան (Ռուսաստանի Դաշնություն, ք. ՈՒյանովսկ),

բ. Լևոն Հրանտի Մարգարյան (Ռուսաստանի Դաշնություն, ք. Վոլգոգրադ),

գ. Նվեր Սերյոժայի Սաֆարյան (Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա),

դ. Արարատ Սամվելի Շահվերդյան (ՈՒկրաինայի Հանրապետություն).

4) Ի պաշտոնե՝ Ոսկեվան գյուղի վարչական ղեկավար Սերգեյ Մեսրոպի Գրիգորյան:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____

Հավելված 2

«Ոսկեվան» հայրենակցական միություն
հասարակական կազմակերպության ընդհանուր
ժողովի 25.07.2025թ. N2 որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՈՍԿԵՎԱՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է «Ոսկեվան» հայրենակցական միություն հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) Խորհրդի իրավասությունները և գործունեության կանոնակարգման հետ կապված հարաբերությունները:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Կազմակերպության Խորհուրդը գործում է «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ, ինչպես նաև Կազմակերպության ընդհանուր ժողովի որոշումներով կամ այլ իրավական ակտերով սահմանված իրավասությունների շրջանակներում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

3. Կազմակերպության խորհուրդը որոշումներ կայացնում է առկա կամ հեռավար նիստերի միջոցով:

4. Կազմակերպության Խոհուրդն իրավազոր է, եթե Խորհրդի նիստին մասնակցում են Խորհրդի կազմի ընդհանուր թվի կեսից ավելին:

5. Կազմակերպության Խորհրդի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

6. Կազմակերպության Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստի նախագահողը և քարտուղարը:

7. Կազմակերպության Խորհրդի նիստի արձանագրությունները և հաշվետվությունները պահպանվում են 5 տարի:

Ընդհանուր ժողովի նախագահ՝ _____ _____

Ընդհանուր ժողովի քարտուղար՝ _____ _____